ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏՎԱՐԺԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԹԵՐԹԻ

ԵՐԵՎԱՆ

Հարգելի՛ խմբագիր,

«ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագրի երկրորդ համարին մեջ կարդացինք պրոֆ. Աշոտ Աբրահամյանի կողմե «Ճամբորդական նոթեր» խորագրով հոդվածը, ուրտեղ թյուրիմացաբար բացատրված էր «Սասունցի Դավիթ» Մարմնիս կազմությունը, զայն վերագրելով Գերաշնորհ Մամբրե Սրբազան Սիրունյանի նախաձեռնության։

Ներկայիս կուգանք հաղորդել Ձեզ, թե «Սասունցի Դավիթ» Մարմինս կազմված է Գահիրեի խումբ մը հայրենասերներու կողմե, Ամենայն Հայոց Հայրապետի արտասահման ուղարկած կոչեն անմիջապես վերջ, հակառակ տեղվույս Ազգային Իշխանության կողմե եղած բուռն արգելքին։

Եթե իր ժամանակին չուզեցինք այս մասին գրել, պարզ այն պատճառով, որ մեզի ավելի կարևոր էր հայրենասիրական գործը, քան անուններու հիշատակությունը։ Անշուշտ, այս ճշտումը պատմական իրողություն մը ճշտած ըլլալու համար է, որը ոչ մեկ անտեսում պիտի նշանակեր Տ. Մամբրե Արքեպիսկոպոսին հայրենասիրական վերաբերմունքին նկատմամբ։

«Սասունցի Դավիթ» Մարմնի հիմնական նպատակն էր հայրենական պատերազմին նյութապես օգնել մեր քաջարի Կարմիր Բանակին և բանակայիններու ընտանիքներուն։ Գիտնալով որ մեր օժանդակությունը բաղդատաբար անոնց անհուն զոհողություններուն աննշան և ոչ հաշվի առնելիք պարտականություն մըն էր, ատոր մեջ փառասիրություն փնտրել՝ և գործ մը տեսածի երևույթը տալ՝ մեր զգացումները փոքրացընել պիտի նշանակեր։ Բայց սխալ պիտի ըլլար նաև այդ անկեղծ պարտականությունը կատարողներու գործը վերագրել ուրիշներու։

«Սասունցի Դավիթ ֆոնտ» Մարմնի հիմնադրումը, ինչպես ըսինք, գործն է քանի մը հայրենասերներու, որոնք այժմ ևս կշարունակեն, այս անգամ հօգուտ նույնքան սիրելի նպատակի մը, որ է ներդաղթի օժանդակությունը։ Այս առթիվ կու գանք մեր խորին հարգանքներն ու սիրալիր բարևները հայտնել Ձեզ և Ձեր աշխատակիցներուն։

Ի դիմաց Սասունցի Դավիթ Ներդաղթի Օժանդակ Մարմնի Վարչության

Ատենապետ՝ *Խ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

Ատենադպիր՝ *Հ. ՄԵՔԵՐՅԱՆ*

Հ. Գ.— Ներկա Վարչության մաս կկազմեն հետևյալ ընկերները.—

Խաչիկ Հովհաննիսյան
Շահեն Թյուրապյան
Մանվել Պեյլերյան
Երվանդ Մարլյան
Հարություն Մեմերյան
Զենոն Գարամանյան
Ասատուր Թորոսյան
Պերճ Պարմանյան
Վարդան Կյուրճյան

ՆՈՒՅՆՔ

23 Հունիսի 1946 թ.
Գահիրե